



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....	6
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	9
5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	10
6. ԱՄՓՈՓՈՒՄ	10

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համաձայն 2020 թվականի առաջին եռամսյակի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նախնական տվյալների՝ հունվար-մարտ ամիսների տնտեսական աճը¹ գնահատվել է 3.8%: Նույն ցուցանիշը 2019-ին կազմել է 7.4%, ինչը նշանակում է, որ տնտեսական աճը դանդաղել է 3.6 տոկոսային կետով: Պատճառը շինարարության ոլորտի անկումն է և ծառայությունների և առևտրի ոլորտների աճի դանդաղումը, ինչը մասամբ (մարտ ամսվա կտրվածքով) պայմանավորված է նոր կորոնավիրուսի (COVID-19) հարուցած ճգնաժամով: Անդրադառնալով 2020-ի առաջին եռամսյակի տնտեսական աճի *կառուցվածքին*² նշենք, որ ամենամեծ նպաստումը ունեցել է ծառայությունների և առևտրի ոլորտը՝ 4.1 տոկոսային կետով, որին հաջորդել է արդյունաբերությունը՝ 0.6 տոկոսային կետով, և գյուղատնտեսությունը՝ 0.2 տոկոսային կետով: Իսկ շինարարության ոլորտը ունեցել է բացասական նպաստում՝ -0.5 տոկոսային կետով²:

Տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ) մասով նկատենք, որ 2020-ի առաջին եռամսյակում այն կազմել է 4.1%, ինչը նախորդ տարվա ցուցանիշից ցածր է 2.4 տոկոսային կետով: Ինչպես ՀՆԱ-ի իրական աճը, ՏԱՑ-ի այս մակարդակը ևս հիմնականում պայմանավորված է արդյունաբերությամբ (2.4 տոկոսային կետ) և ծառայությունների և առևտրի ոլորտով (2.3 տոկոսային կետ): ՏԱՑ-ին դրական է նպաստել նաև գյուղատնտեսության ոլորտը (0.6 տոկոսային կետ), մինչդեռ շինարարությունն ունեցել է բացասական նպաստում (-0.8 տոկոսային կետ)³:

Անդրադառնանք առանձին ոլորտների և ենթաճյուղերի դինամիկային: 2020-ի առաջին եռամսյակում **ծառայությունների** ոլորտի թողարկումը աճել է 6.0%-ով: Համեմատության համար նշենք, որ նույն ցուցանիշը 2019-ին եղել է անհամեմատ ավելի բարձր՝ 17.3%: Աճի տեմպի նվազումը պայմանավորված է ոլորտի «շարժիչ-ենթաճյուղերի» համեմատաբար ցածր աճերով: Այսպես⁴

К) «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն»՝ 12.9%՝ նախորդ տարվա 20.3%-ի դիմաց,

¹ Սույն վերլուծությունում բոլոր աճերը հաշվարկված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ եռամսյակի նկատմամբ: Ուստի, դինամիկան նկարագրելիս համեմատության բազան հաճախ չի հիշատակվում՝ անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով:

² Տնտեսական աճի ցուցանիշը՝ 3.8 տոկոսը ստանալու համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել ֆինանսական միջնորդության անուղղակի չափվող ծառայությունների (ՖՄԱԶԾ) նպաստումը՝ -0.7 տոկոսային կետ, ինչպես նաև զուտ անուղղակի հարկերի նպաստումը՝ 0.1 տոկոսային կետ: Այսպիսով, $3.8 = 4.1 + 0.6 + 0.2 - 0.5 - 0.7 + 0.1$:

³ Տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ 4.1 տոկոսը, ստանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել այլ գործոնների բացասական նպաստումը՝ -0.4 տոկոսային կետով: Այսպիսով, $4.1 = 2.4 + 2.3 + 0.6 - 0.8 - 0.4$:

⁴ Տնտեսության ճյուղերը համարակալված են ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման (ՏԳՏԴ խմբ. 2, NACE Rev. 2):

- R) «մշակույթ, զվարճություններ և հանգիստ»՝ 8.5%՝ նախորդ տարվա 40.0%-ի դիմաց,
 J) «տեղեկատվություն և կապ»՝ 6.4%՝ նախորդ տարվա 8.0%-ի դիմաց:

Նշենք նաև, որ վերոհիշյալ ենթաճյուղերից K-ն ծառայությունների ոլորտի աճին նպաստել է 3.0 տոկոսային կետով, R-ը՝ 2.1 տոկոսային կետով, իսկ J-ը՝ 1.0 տոկոսային կետով:

Առևտրի շրջանառության աճը նախորդ տարվա համեմատ դանդաղել է 11.2 տոկոսային կետով՝ կազմելով 0.2%: Այս բացասական միտումը բացատրվում է երկու հանգամանքներով: Առաջին՝ նվազել է մանրածախ առևտրի աճի տեմպը՝ կազմելով ընդամենը 0.6%՝ նախորդ տարվա 7.8%-ի դիմաց: Երկրորդ՝ մեծածախ առևտրի բնագավառում գրանցվել է 0.8% անկում՝ նախորդ տարվա 14.9% աճի դիմաց:

2020-ի առաջին եռամսյակում **արդյունաբերության** թողարկումը աճել է 8.7%-ով, ինչը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 7.1 տոկոսային կետով: Աճի տեմպի արագացումը պայմանավորված է ոլորտի հետևյալ 2 ենթաճյուղերով, որոնք 2020-ի առաջին եռամսյակում աճել են ավելի արագ, քան 2019-ի առաջին եռամսյակում՝

- B) «հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»՝ 26.9%՝ նախորդ տարվա -4.5%-ի դիմաց,
 D) «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում»՝ 11.7%՝ նախորդ տարվա -3.1%-ի դիմաց:

Ընդ որում, B ենթաճյուղի շոշափելի աճը մեծ մասամբ պայմանավորված է «մետաղական հանքաքարի արդյունահանման» 27.6% աճով (նախորդ տարվա 5% անկման դիմաց), ինչը կապված է Թեղուտի հանքավայրի շահագործման հետ: Մյուս կողմից, առավել բացասական դինամիկա է արձանագրվել արդյունաբերության մյուս երկու ենթաճյուղերում՝

- C) «մշակող արդյունաբերություն»՝ 3.8%՝ նախորդ տարվա 5.5%-ի դիմաց,
 E) «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում»՝ -17.8%՝ նախորդ տարվա -0.2%-ի դիմաց:

Նշենք, որ C ենթաճյուղի ընդլայնման վրա էական ազդեցություն են ունեցել «ոսկերչական արտադրատեսակների արտադրության» 88.8% և «սննդամթերքի արտադրության» 8.8% աճերը:

Անդրադառնալով արդյունաբերության աճի կառուցվածքին՝ նշենք, որ ամենամեծ նպաստումը ունեցել է B ենթաճյուղը՝ 4.7 տոկոսային կետով, այնուհետև C ենթաճյուղը՝ 2.5 տոկոսային կետով, և D ենթաճյուղը՝ 1.8 տոկոսային կետով: Ինչ վերաբերում է E ենթաճյուղին, ապա այն հակազդել է արդյունաբերության աճին 0.3

տոկոսային կետով: Նկատենք, որ թեև 2020-ի առաջին եռամսյակում D ենթաճյուղը աճել է ավելի արագ, քան C-ն, այդուհանդերձ այն արդյունաբերական արտադրանքի ավելացմանը նպաստել է ավելի փոքր չափով: Խնդիրն այն է, որ արդյունաբերության թողարկման կառուցվածքում D ենթաճյուղը ունի ավելի փոքր մասնաբաժին, քան C-ն:

2020-ի առաջին եռամսյակում **գյուղատնտեսության և ձկնորսության** համախառն արտադրանքի աճի տեմպը կազմել է 4.2%: Նույն ցուցանիշը 2019-ին եղել է 0.8%, ինչը նշանակում է, որ աճի տեմպը արագացել է 3.4 տոկոսային կետով: Հատկանշական է, որ այս արագացումը արձանագրվել է բուսաբուծության և ձկնորսության աճի տեմպերի նվազման պայմաններում: Իսկապես, բուսաբուծության աճի տեմպը գնահատվել է 27.9%՝ նախորդ տարվա 48.7%-ի դիմաց, իսկ ձկնորսությանը՝ 3.0%՝ նախորդ տարվա 8.8%-ի դիմաց: Ոլորտի դրական դինամիկայի վրա էական ազդեցություն է ունեցել անասնաբուծության ենթաճյուղի 2.0% աճը, որը փոխարինել է նախորդ տարվա 3.4% անկմանը: Անասնաբուծության աճը մեծ մասամբ պայմանավորված է մսի և ձվի արտադրության համապատասխանաբար 5.3% և 8.3% աճերով:

Անդրադառնալով ոլորտի աճի կառուցվածքին՝ նշենք, որ 4.2% աճի 2.3 տոկոսային կետը պայմանավորված է բուսաբուծությամբ, 1.5 տոկոսային կետը՝ անասնաբուծությամբ, 0.4 տոկոսային կետը՝ ձկնորսությամբ:

Շինարության ոլորտում արձանագրվել է անկում՝ 9.4%-ով: Համեմատության համար նշենք, որ 2019-ի առաջին եռամսյակում գրանցվել է 10.8% աճ: Ինչո՞ւ է պայմանավորված այս բացասական դինամիկան: Շինարարության ֆինանսավորման աղբյուրները դիտարկելիս պարզ է դառնում, որ էական անկում է գրանցվել պետական բյուջեի հաշվին իրականացվող շինարարության ծավալներում (43.5% նվազում՝ նախորդ տարվա 0.4% նվազման դիմաց), որը 11.0 տոկոսային կետով նպաստել է ոլորտի կրճատմանը: Բացի այդ, էական անկում է արձանագրվել նաև մարդասիրական օգնության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալներում (78.1% նվազում՝ նախորդ տարվա 2.6% նվազման դիմաց), որի ազդեցության չափը գնահատվում է 1.1 տոկոսային կետ:

Պահանջարկի տեսանկյունից տնտեսական աճի դանդաղումը 2020-ի առաջին եռամսյակում բացատրվում է հետևյալ երկու գործոններով: Առաջին՝ 2019-ի առաջին եռամսյակի համեմատ դանդաղել է *վերջնական սպառման ծախսերի* աճի տեմպը՝ կազմելով 3.0%՝ նախորդ տարվա 11.8%-ի դիմաց: Պատճառն այն է, որ նվազել են և՛ տնային տնտեսությունների սպառման աճի տեմպը (2.7%՝ նախորդ տարվա 11.4%-ի դիմաց), և՛ պետական սպառման աճի տեմպը (5.9%՝ նախորդ տարվա 15.1%-ի դիմաց): Երկրորդ՝ *հիմնական միջոցների համախառն կուտակումը* նվազել է 7.0%-ով այն դեպքում, երբ 2019-ի առաջին եռամսյակում գրանցվել է աճ 11.0%-ով: Դրական միտումներ են արձանագրվել *զույր*

արտահանման դինամիկայում, որը 2020-ի առաջին եռամսյակում աճել է 39.4%-ով՝ նախորդ տարվա 4.3% աճի դիմաց: Սակայն առավել մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ այս բարելավումը պայմանավորված է ապրանքների և ծառայությունների ներմուծման նվազմամբ, ինչը հետևանք է բնակչության գնողունակ պահանջարկի թուլացման: Իսկապես, ներմուծումը նվազել է 7.9%-ով՝ նախորդ տարվա 3.2% նվազման դիմաց: Նշենք նաև, որ անկում է ապրել նաև ապրանքների և ծառայությունների արտահանումը՝ 1.6%-ով՝ նախորդ տարվա 2.9% նվազման դիմաց:

2020-ի առաջին եռամսյակում արձանագրվել է **գնանկում**՝ 0.1%-ով: Նույնքան է կազմել նաև 12-ամսյա գնանկումը մարտին (այսինքն՝ 2020-ի մարտը 2019-ի մարտի նկատմամբ): Համեմատության համար նշենք, որ 2019-ի առաջին եռամսյակում գնաճը կազմել է 1.5%: Նկատենք, որ ՀՀ ԿԲ-ի գնաճի թիրախը 4.0%-ն է՝ ± 1.5 տոկոսային կետ թույլատրելի միջակայքով: Գների անկմանը և նոր կորոնավիրուսի (COVID-19) հարուցած ճգնաժամին հակազդելու նպատակով 2020 թվականի առաջին եռամսյակում ՀՀ ԿԲ-ն իրականացրել է խթանող դրամավարկային քաղաքականություն՝ իջեցնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով և սահմանելով 5.25%:

Հաշվարկելով **հարկաբյուջետային ազդակը**՝ ՀՀ կառավարությունը արձանագրում է, որ ֆիսկալ քաղաքականությունը 2020 թվականի առաջին եռամսյակում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) պահանջարկի վրա ունեցել է 1.4 ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների զսպող (-0.6) և ծախսերի ընդլայնող (2.1) ազդեցություններով:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2020 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի *փաստացի* եկամուտները (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) աճել են 15.8%-ով՝ կազմելով 370.3 մլրդ դրամ: Այս աճը ձեռք է բերվել ի հաշվով 2 հիմնական հոդվածների՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի և այլ եկամուտների գծով հավաքագրված գումարների ավելացման: Մասնավորապես, հարկային եկամուտները և պետական տուրքերը 2019-ի առաջին եռամսյակի համեմատ աճել են 16.5%-ով՝ կազմելով 349.0 մլրդ դրամ, իսկ այլ եկամուտները՝ 29.4%-ով՝ կազմելով 19.4 մլրդ դրամ: Ինչ վերաբերում է պաշտոնական դրամաշնորհներին, ապա դրանք նվազել են 64.6%-ով՝ կազմելով ընդամենը 1.8 մլրդ դրամ:

Այժմ անդրադառնանք պետական բյուջեի եկամուտների՝ առաջին եռամսյակի կատարողականին, այն է՝ փաստացի և ճշտված ցուցանիշների համեմատությանը

(Աղյուսակ 1): Ընդհանուր եկամուտների ճշտված ծրագրային ցուցանիշը կազմում էր 362.7 մլրդ դրամ: Փաստացի հավաքագրումը, ինչպես նշվեց, կազմել է 370.3 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ կատարողականը 102.1% է: Գերակատարվել են հարկային եկամուտները և պետական տուրքերը և այլ եկամուտները: Այսպես, 342.7 մլրդ դրամ ճշտված ցուցանիշի դիմաց հավաքագրվել է 349.0 մլրդ դրամի հարկային եկամուտներ և պետական տուրքեր՝ ապահովելով ծրագրի իրագործում 101.8%-ով կամ ճշտված պլանի նկատմամբ 6.3 մլրդ դրամ գերակատարումով: Մյուս կողմից, 14.5 մլրդ դրամ ճշտված ցուցանիշի դիմաց հավաքագրվել է 19.4 մլրդ դրամի այլ եկամուտներ՝ ապահովելով ծրագրի իրագործում 133.9%-ով: Պաշտոնական դրամաշնորհների մասով, սակայն, առկա է էական թերակատարում: Այսպես, ստացվել է 1.8 մլրդ դրամի դրամաշնորհ, ինչը 66.7%-ով գիջում է ճշտված ծրագրային ցուցանիշին՝ 5.4 մլրդ դրամին:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները 2020թ. առաջին եռամսյակում, մլրդ դրամ

	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարման %-ը ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	357.8	362.7	370.3	102.1%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	340.1	342.7	349.0	101.8%
Պաշտոնական դրամաշնորհներ	5.4	5.4	1.8	33.3%
Այլ եկամուտներ	12.3	14.5	19.4	133.9%

Նշենք, որ 2020-ի առաջին եռամսյակում հարկային եկամուտների և պետական տուրքերի 34.2%-ը ապահովվել է ավելացված արժեքի հարկի, 31.3%-ը՝ եկամտային հարկի, 10.9%-ը՝ շահութահարկի, 7.8%-ը՝ ակցիզային հարկի, 4.8%-ը՝ մաքսատուրքերի, 2.6%-ը՝ շրջանառության հարկի, 2.3%-ը՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի, 1.7%-ը՝ սոցիալական վճարների, իսկ մնացած մասը՝ այլ հարկերի և պետական տուրքերի հաշվին:

Պաշտոնական դրամաշնորհների ցածր կատարողականը մեծ մասամբ պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում ստացվել է 882.6 մլն դրամ կամ նախատեսված ցուցանիշի 16.2%-ը: Մասնավորապես, չեն ստացվել 11 ծրագրերի շրջանակներում նախատեսված 3.4 մլրդ դրամ դրամաշնորհները: 5 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 30%-ով, որը կազմել է

543.9 մլն դրամ: Իսկ 2 ծրագրերի շրջանակներում ստացվել է պլանավորվածից 58.6%-ով ավելի գումար՝ 338.7 մլն դրամ:

ՀՀ կառավարությունը այլ եկամուտների կատարողականի համեմատաբար բարձր ցուցանիշը բացատրում է ՀՀ կադաստրի կոմիտեի՝ 2019 թվականի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից ստացված մուտքերով, որը կազմել է ավելի քան 1.3 մլրդ դրամ (նախորդ տարվա 538.0 մլն դրամի դիմաց): Բացի այդ, էական նշանակություն է ունեցել նաև այն հանգամանքը, որ ռեզիդենտներին տրամադրված վարկերից ստացված տոկոսավճարները, ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից մուտքերը, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարները գերազանցել են եռամսյակային ծրագիրը:

Նկատենք, որ 2019-ի առաջին եռամսյակի համեմատ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը էական փոփոխություններ չի կրել: Հարկային եկամուտների և պետական տուրքերի և այլ եկամուտների տեսակարար կշիռները աճել են համապատասխանաբար 0.56 և 0.55 տոկոսային կետով ու կազմել 94.3% և 5.2%: Միաժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պաշտոնական դրամաշնորհների մասնաբաժինը նվազել է 1.11 տոկոսային կետով և կազմել 0.5%:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2020 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի *փաստացի* ծախսերը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) աճել են 15.2%-ով՝ կազմելով 332.3 մլրդ դրամ: Ընդ որում, աճի միտում է գրանցվել թե՛ ընթացիկ, թե՛ կապիտալ ծախսերի դինամիկայում: Մասնավորապես, 2019-ի առաջին եռամսյակի համեմատ ընթացիկ ծախսերը ավելացել են 11.4%-ով՝ կազմելով 315.3 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը՝ 213.0%-ով՝ կազմելով 16.9 մլրդ դրամ:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերը (տնտեսագիտական դասակարգմամբ) 2020թ. առաջին եռամսյակում, մլրդ դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարման %-ը ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	398.4	404.9	332.3	82.1%
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	356.0	361.9	315.3	87.1%
այդ թվում՝				
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	37.1	37.3	33.8	90.8%
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ	40.0	40.4	25.1	62.2%
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	38.6	38.6	37.8	97.8%
ՍՈՒՔՍԻԴԻԱՆԵՐ	26.8	26.8	21.6	80.4%
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	33.8	36.7	31.1	84.8%
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	125.7	125.8	120.1	95.4%
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	54.0	56.3	45.8	81.4%
ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ (ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)	42.4	43.0	16.9	39.4%
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	42.4	43.0	17.1	39.8%
այդ թվում՝				
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	42.4	43.0	17.1	39.8%
այդ թվում՝				
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	35.1	35.1	14.1	40.2%
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐԳՈՒՄ	6.4	7.1	2.9	41.5%
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	0.9	0.9	0.1	10.4%
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-	-	-0.2	-

Չնայած այս դինամիկային՝ ծախսերի կատարողականը կրկին էապես շեղվել է ծրագրային ցուցանիշներից (Աղյուսակ 2): Խնդիրն այն է, որ բյուջեով առաջին եռամսյակի համար թիրախավորվել էր ավելի համարձակ ցուցանիշ՝ 404.9 մլրդ դրամ, սակայն կատարվել է ծրագրի միայն 82.1%-ը, որը գնահատվում է շուրջ 332.3 մլրդ դրամ: Նույն կերպ, ընթացիկ ծախսերի փաստացի մակարդակը՝ 315.3 մլրդ դրամը, հանդիսանում է ճշտված պլանի՝ 361.9 մլրդ դրամի միայն 87.1%-ը:

Բացի այդ, իրավիճակը մտահոգիչ է նաև կապիտալ ծախսերի մասով: Իսկապես, 43.0 մլրդ դրամ ճշտված ցուցանիշի դիմաց կատարվել են միայն 16.9 մլրդ դրամի կապիտալ ծախսեր՝ ծրագրի իրագործումը ապահովելով միայն

39.4%-ով: Այսպիսով, արձանագրված 72.6 մլրդ դրամ շեղումների 64.1%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 35.9%-ը՝ կապիտալ ծախսերին:

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ թերակատարումները բնորոշ են ընթացիկ ծախսերի բոլոր հոդվածներին: Միաժամանակ, անհրաժեշտ է արձանագրել նաև, որ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ առկա է որոշակի առաջընթաց փաստացի ընթացիկ ծախսերի բոլոր ուղղություններով, բացի սուբսիդիաներից: Ստորև ներկայացված են փաստացի աճերը՝ 2020-ի առաջին եռամսյակը 2019-ի առաջին եռամսյակի նկատմամբ՝ ըստ ընթացիկ ծախսերի բաղադրիչների՝

- աշխատանքի վարձատրություն՝ 7.3%,
- ծառայությունների և ապրանքների ձեռքբերում՝ 6.9%,
- պետական պարտքի սպասարկման ծախսեր՝ տոկոսավճարներ՝ 7.3%,
- դրամաշնորհներ՝ 23.6%,
- սոցիալական նպաստներ՝ 17.6%, կենսաթոշակներ՝ 11.6%,
- այլ ծախսեր՝ 25%:

Ինչ վերաբերում է սուբսիդիաներին, ապա դրանք նվազել են 13.5%-ով: ՀՀ կառավարությունը սա պայմանավորում է ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրման ծախսերի կատարողականով՝ կապված ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների մրցութային գործընթացի երկարաձգման հետ:

Կապիտալ ծախսերի հոդվածների մասով առկա է նույն պատկերը, ինչ ընթացիկ ծախսերի հոդվածների: Մասնավորապես, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը զգալիորեն թերակատարվել են՝ միաժամանակ 3.1 անգամ գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Նշենք նաև, որ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել են առաջին եռամսյակի բյուջեով չնախատեսված մուտքեր՝ 183.8 մլն դրամի չափով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 134.4 մլն դրամի դիմաց:

Ակնհայտ է, որ ծախսերի թերակատարումը խնդրահարույց է երեք տեսանկյունից: Առաջին՝ այն վկայում է բյուջետային պլանավորման ընթացակարգերի թերությունների մասին այն իմաստով, որ կառավարության մշակած պլանները և ծրագրերը կենսագործվում են հատվածաբար: Երկրորդ՝ այն զսպում է տնտեսական ակտիվությունը, ինչը արդարացված չէ մարտ ամսին սկիզբ առած ճգնաժամի պայմաններում, երբ տնտեսությունը կարիք ունի հավելյալ իրացվելիության: Երրորդ՝ կապիտալ ծախսերի կրճատումը տուգանում է երկարաժամկետ տնտեսական աճը⁵:

⁵ «Լոյս» հիմնադրամ, ՀՀ պետական բյուջեի կապիտալ ծախսերի թերակատարումը և դրա հնարավոր հետևանքները, 05.09.2019, <https://bit.ly/3ehg0bs> (այցելվել է 26.05.2020թ.):

«Լույս» հիմնադրամը ՀՀ պետական բյուջեի մասին նախորդ վերլուծություններում անդրադարձել է ծախսերի թերակատարման հնարավոր պատճառներին: Եվս մեկ անգամ նշենք, որ կառավարության խիստ զգուշավոր քաղաքականությունը պայմանավորված է այն կանխավարկածով, որ կապիտալ ծրագրերը պարունակում են կոռուպցիոն ռիսկեր:

Բյուջետային ծախսերի կառուցվածքի մասով նշենք, որ 2019-ի առաջին եռամսյակի համեմատ 3.2 տոկոսային կետով ավելացել է կապիտալ ծախսերի մասնաբաժինը՝ հասնելով 5.1%-ի: Այս միտումը, իհարկե, դրական է: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բյուջեի պատշաճ կատարման պարագայում կապիտալ ծախսերի մասնաբաժինը կկազմեր 10.6%: Սա նշանակում է, որ կառավարությունը պետք է գործադրի ջանքեր՝ բարելավելու ինչպես բյուջետային պլանավորման ընթացակարգերը, այնպես էլ ծրագրերի իրագործման գործընթացները:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ

2020 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեն կատարվել է հավելուրդով՝ 38.0 մլրդ դրամի չափով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակը ևս բնորոշվել է բյուջետային հավելուրդով՝ 31.2 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները 2020թ. առաջին եռամսյակում, մլրդ դրամ

	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Առաջին եռամսյակի փաստացի	Կատարման %-ը ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	357.8	362.7	370.3	102.1%
ԾԱԽՍԵՐ	398.4	404.9	332.3	82.1%
ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)	40.6	42.3	-38.0	-

Սակայն, ինչպես երևում է Աղյուսակ 3-ում, բյուջեով պլանավորվել էր դեֆիցիտ՝ 42.3 մլրդ դրամի չափով: Պլանային և փաստացի ցուցանիշների այսպիսի էական տարբերությունը պայմանավորված է եկամուտների գերակատարմամբ և ծախսերի թերակատարմամբ: Ընդ որում, այս երկու իրողություններից առավել շոշափելի է ծախսերի ցածր կատարողականի ազդեցությունը, որով բացատրվում է պրոֆիցիտի 80%-ը: Նշենք նաև, որ հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -1.5 մլրդ դրամ, արտաքին աղբյուրները՝ -36.5 մլրդ դրամ՝ առաջին եռամսյակում ծրագրված համապատասխանաբար 56.3 մլրդ դրամի և -14.1 մլրդ դրամի դիմաց:

Այսպիսով, 2020-ի առաջին եռամսյակում ՀՀ կառավարությունը ցուցաբերել է պահպանողական վարքագիծ: Մասնավորապես, կառավարությունը ձևավորել է բյուջետային խնայողություններ այն պայմաններում, երբ տնտեսությունը առավել քան երբևէ ունի պետական օժանդակության կարիքը: ՀՀ կառավարության գործունեության՝ անցած 2 տարիների փորձը թերևս բավարար էր՝ արձանագրելու, որ այս մոտեցումը վնասում է տնտեսությանը՝ խաթարելով տնտեսական զարգացումների ռիթմը:

5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2020-ի մարտի 31-ի դրությամբ⁶ ՀՀ պետական պարտքը կազմել է 7289.8 մլն դոլար, ինչը 5.1%-ով գերազանցում է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Ինչպես գիտենք, պետական պարտքը կենտրոնական բանկի և կառավարության պարտքերի հանրագումարն է: Այս առումով հարկ է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում կենտրոնական բանկի պարտքը նվազել է 8.3%-ով և կազմել 499.5 մլն դոլար: Իսկ կառավարության պարտքը աճել է 6.3%-ով՝ կազմելով 6790.3 մլն դոլար (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Պետական պարտքը 2020թ. և 2019թ. մարտի 31-ի դրությամբ, մլն ԱՄՆ դոլար

	31.03.2019թ.	31.03.2020թ.	Աճի տեմպը
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ	6934.1	7289.8	105.1%
այդ թվում՝			
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔ	6389.4	6790.3	106.3%
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՊԱՐՏՔ	544.7	499.5	91.7%

Անդրադառնալով պետական պարտքի կառուցվածքին՝ նշենք, որ դիտարկվող ժամանակահատվածում 1.0 տոկոսային կետով ավելացել է կառավարության պարտքի մասնաբաժինը՝ կազմելով 93.1%, ինչի արդյունքում կենտրոնական բանկի պարտքի մասնաբաժինը նվազել է և դարձել 6.9%:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

2020 թվականի առաջին եռամսյակի վերջում՝ մարտ ամսվա կեսերից, տնտեսական իրավիճակը ՀՀ-ում արմատապես փոխվեց: Մարտի 16-ին ՀՀ կառավարությունը, ելնելով նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածման մտահոգիչ տեմպերից, երկրում հայտարարեց արտակարգ դրություն: Ընդհատվեցին տնտեսական գործունեության բազմաթիվ տեսակներ, ինչը հանգեցրեց առաջարկի կրճատմանը: Այս ճգնաժամը «գումարվեց» հունվար և փետրվար ամիսներին

⁶ Նկատենք, որ ի տարբերություն սույն վերլուծությունում դիտարկված այլ մեծությունների՝ *պետական պարտքը* պաշար-ցուցանիշ է, ինչը նշանակում է, որ այն սահմանվում է կոնկրետ ամսաթվի դրությամբ:

արձանագրված բացասական միտումներին⁷ դառնալով տնտեսական աճի դանդաղման պատճառ:

Եվ այսպես, 2020-ի առաջին եռամսյակում տնտեսական աճը կազմել է 3.8%՝ նախորդ տարվա 7.4%-ի դիմաց: Առաջարկի տեսանկյունից նվազումը պայմանավորված է երկու գործոններով: Առաջին՝ շինարարության ոլորտում արձանագրվել է անկում՝ 9.4%-ով՝ նախորդ տարվա 10.8% աճի դիմաց: Երկրորդ՝ էապես դանդաղել է ծառայությունների և առևտրի աճի տեմպը: Այսպես, ծառայությունների ոլորտի թողարկումը աճել է 5.7%-ով՝ նախորդ տարվա 17.3%-ի դիմաց, իսկ առևտրի շրջանառությունը՝ 0.2%-ով՝ նախորդ տարվա 11.4%-ի դիմաց:

Պահանջարկի տեսանկյունից տնտեսական աճի դանդաղումը բացատրվում է հետևյալ ցուցանիշներով: Վերջնական սպառման ծախսերի աճի տեմպը կազմել է 3.0%՝ նախորդ տարվա 11.8%-ի դիմաց, իսկ հիմնական միջոցների համախառն կուտակումը նվազել է 7.0%-ով՝ նախորդ տարվա 11.0% աճի դիմաց:

Թեև պետական բյուջեի եկամուտները կատարվել են 102.1%-ով, այնուամենայնիվ, ՀՀ կառավարությունը հերթական անգամ թերակատարել է բյուջետային ծախսերը: Այսպես, ընթացիկ ծախսերը կատարվել են միայն 87.1%-ով, իսկ կապիտալ ծախսերը՝ 39.4%-ով: Հայտնի է, որ ընթացիկ ծախսերի ցածր կատարողականի պայմաններում թուլանում է պահանջարկը⁸, և նվազում է բիզնեսների շահութաբերությունը, ինչը բացասաբար է անդրադառնում ընթացիկ տնտեսական իրավիճակի վրա: Իսկ կապիտալ ծախսերի թերակատարումը խաթարում է նաև ապագա տնտեսական աճի հիմքերը՝ վտանգելով բնակչության բարեկեցությունը երկարաժամկետ հատվածում:

Այսպիսով, ՀՀ կառավարությունը, ելնելով հարկաբյուջետային ազդակի հաշվարկից, հայտարարում է, որ 2020-ի առաջին եռամսյակում ֆիսկալ քաղաքականությունը եղել է ընդլայնող: Ակնհայտ է, սակայն, որ անկախ բնորոշումներից՝ այն միջոցառումները, որոնք ուղեկցվում են բյուջետային հավելուրդի ձևավորմամբ, ինչպես նաև եկամուտների գերակատարմամբ և ծախսերի թերակատարմամբ, ըստ սահմանման՝ չեն կարող մեղմել տնտեսական զարգացումների ռեցեսիոն միտումները: Ժամանակն է նախաձեռնելու պրոակտիվ միջոցառումներ և ծրագրեր՝ խթանելու պահանջարկը և հաղթահարելու վերահաս տնտեսական մարտահրավերները:

⁷ Առավել մանրամասն տե՛ս «Լույս» հիմնադրամ, ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացումները 2020 թվականի հունվար ամսին (հունվար-փետրվար ամիսներին, հունվար-մարտ ամիսներին), <https://bit.ly/3c5oukk> (այցելվել է 26.05.2020թ.):

⁸ Նկատենք, որ թույլ պահանջարկի մասին է վկայում նաև 0.1% գնանկումը, որ արձանագրվել է 2020-ի առաջին եռամսյակում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: